

ԳՐԱԿԱՆ

٤٢

- | | |
|--|-----|
| Հ. ՄԵՍՐՈՊ ՀԱՆԱՇԵԱՆ. — Եղեա Տէմիրճիպաշեան. | 245 |
| ՏՈՒԹ. Ա. ԱՅԵՂԵԱՆ. — Խ. Արսլեանի ծննդեան
տարին | 252 |
| Հ. ՎԱՀԱՆ ՅՈՎՀԱՆՆԵՍԵԱՆ. — Երզ խաղաղութեան. | 266 |
| » » — Աղօթք. | 267 |
| » » — Սոխակը | 268 |
| ՄԱՌԻ ԱԹՄԱՃԵԱՆ. — Մորմոք | 273 |
| » » — Ահքերուն համարը | 274 |
| » » — Հայեւիւն | 275 |

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

- Ա. ԽԱԶՏԱՐԵԱՆ. — Հայ հնազանդական կորիզ մը. 255
- ՏՈՒՔԹ. Յ. ՏԵՐ ԴԱԶԱՐԵԱՆ. — ԿԷԼԻԿԿԱՆ աշխարհ.
ՍԷՄ, ԿՈՊԵԽԱՌՈՒՐԵՐՂՂ 257
- ՊԵՐՏ Մ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ. — ԴժՎՈՒՆԵՐԻ ղրամագիւտը . 260
- ՏՈՒՔԹ. ՅՈՎՀ. ԱՐՔԻՆԵԱՆ. — ՏՈՒՆԿԵՐ և անոնց
հայերէն անունները 264

ԳԵՂԱՐՈՒԷՄՏԱԿԱՆ

8. ԱՇԴԱՅԵԱՆ. - Համայնագրատեր շարժանկարի
պատմութեան (շար.) 279

ԳՐԱԽՈՍԱԿԱՆ

- Հ. ՄԵՍՐՈՊ ՃԱՆԱՅԵԱՆ, - Վանապուր « Խեղճ
մարդկութիւն » . ապ. Վենետիկ 1948 . 279
- Մտել Աթմաճեան « Գողգոթայի շու-
շաններ » . ապ. Փարիզ, 1948 . 280
- Արիւ Տէր-Միլտիէան. « Տարերբ
Հոգեկախութեան » ապ. Պոսթոն 1945. 281
- Նարեկ « Մատեան ողբերգութեան » Ս.
Գր. Նարեկացիի, Թրգմ. աշխարհագրաբ.
Գ. Ե. Տ. . 281

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԱՐՁԱԳԱՆԳ

8. Զեթ-Ռիսին, — Արեւելագէտներու քսանըմէկերորդ
համագումարը 291
- Լեւոն, ԳԱՅԱՄԱՆԻԱՆ, — «ժամանակ» օրաթերթի
քառամսամեակը (1908-1948) 293
- Յ. Թումանեանի «Անյշ»ը շարժա-
նկարի վրայ 294

LITTÉRATURE

PAGE

- | | |
|---|-----|
| <i>P. Mesrob Djanachian.</i> - Elie Démirdjibachian | 245 |
| <i>Dr. A. Abeghian.</i> - Date de la naissance de Kh. Abovian | 252 |
| <i>P. Vahan Hovhannessian.</i> - Chant de paix | 266 |
| » » - Prière | 267 |
| » » - Rossignol | 268 |
| <i>Marie Atmadjian</i> - Angoisse | 273 |
| » » - Symphonie des yeux | 274 |
| » » - Miroir | 275 |
| <i>P. Mesrob Djanachian.</i> - Paul Valéry et sa poésie (suite) | 276 |

PHILOLOGIE

- | | |
|--|-----|
| <i>A. Khatchadrian.</i> - Un noyau des études archéologiques arméniennes . . . | 255 |
| <i>Dr. H. Der Ghazarian.</i> - Monde Cilicien: Sis et Gobidar-Pert . . . | 257 |
| <i>Berdj M. Garabédian.</i> - Invention numismatique à Daphné . . . | 260 |
| <i>Dr. Jean Artinian.</i> - Les plantes et leurs noms arméniens . . . | 264 |

BEAUX ARTS


- J. Achrafian.* — Panorama de l'histoire du
cinéma 270

RECENSION

- P. M. Djanachian.* – Vanadour « Pauvre humanité » éd. Venise, 1948 . . . 279
- Marie Atmadjian « Lis du Calvaire » 280
- Aris Der-Megherditchian. « Éléments de la science de l'âme » éd. Boston, 1945 281
- « Narég » de St. Grégoire Naregatz (à l'occasion d'une nouvelle traduction métrique en arm. moderne) 281

ECHO ARMÉNIEN

- D. Tchitouny.* - Le XXIme Congrès des
orientalistes 291
- Léon Capamadjian.* - Un jalon dans l'histoire
de la Presse (1908-1948) 293
- A propos d'Anouche à l'Ecran . 294



Բ Ա Ջ Մ Ա Վ Է Պ

ՀԱՆԴԻՍԱՐԱՆ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ - ԳՐԱԿԱՆ - ԳԻՏԱԿԱՆ - ԲԱՐՈՅԱԿԱՆ

1843 - 1948

106-17 S U R T

ՆՈՅԵՄԲԵՐ-ԴԵԿՏԵՄԲԵՐ

ԹԻԻ 11-12

Ե Ղ Ի Ա Տ Է Մ Ի Ր Զ Ի Պ Ա Շ Ե Ա Ն

(ՄԱՀՈՒԱՆ ՔԱՌԱՄՆԱՄԵԱԿԻՆ ԱՌԹԻԻ)

Այս տարի կը լրանայ քառասնամեակը իր տարաբախտ կորուստին : Իբր մարդ և իբր զրազէտ՝ Եղիա ամէնէն քիչ ուսումնասիրուածն է թերեւս և ամէնէն քիչ կարգացուածը՝ հակառակ իր բազմակողմանի արտադրութեան՝ որ թերթերու խորշերուն մէջ ցրուած, հասարակութեան համար մնաց տեսակ մը այն անծանօթը՝ որուն շուրջը սակայն կ'ապրի սովորականէ զուրս հմայք մը՝ որպէս մեծատաշտանդ, ասոյնիսկ որպէս հանճարեղ խորհողի, ասուպի պէս անցած մեր զրակաշուծեան անդաստանէն : Շահնագարեալն մը խղճիւն պարզ քննորիւնը, Աւելիւն ճառը, Նոր կեանք, Դամբարան, Թուրք առ Ներսէս կեանք, Դամբարան, Շրջագայորիւն մը իմ քաղիս մէջ, Պիծակ, Փիլիսոփայական քառարան, պոռճիւր-տետրակներ բոլորն ալ, արդէն սպառած, Սիրայիկ ևամակները (հրատարակուած շատ ուշ՝ Հրանտ Նազարեանցէն), ևհա ինչ որ ծանօթ է հրապարակի վրայ Եղիա Տէմիրճիպաշեանէ :

Այդ բոլորը՝ չափազանց անձուկ, չափազանց անկատար զաղափար մը միայն կուտան անոր՝ որ եղաւ մեր ամէնէն խորիմաց գրողներէն՝ Նոյնիսկ իր բոլոր արտառցեութեան մէջ, Նոյնիսկ իր շեղեալ մտաւորականի էութեանը մէջ։ Ո՞վ կը ճանչնայ իր բանաստեղծութիւնները՝ ցրուած հանդէսներու և թերթերու անկիւնները՝ որոնք իր արժիւթեւեմներն էին հզօր երեւակայութեամբ մը ջերմացած, իր նկարագրական արձակ էջերը, իր վիպային նկարագրով պատկերները, իր ինքնատիպ քննադատական տեսութիւնները դարու կեանքին, մարդոց և զրական ճաշակներու ու փորձերու մասին, իր ատենաբանութիւնները խանդավառ շեշտով մը արտասանուած, որոնք այնքան խանդավառութիւն կը ստեղծէին շուրջը։ Ըսէ՛ք, ո՞վ կը ճանչնայ այս բոլորը։ Այսօր քառասուն տարի անցած է, և ցարդ ոչ ոք մտածեց հատորի մը մէջ ամփոփել զանոնք, որոնք կրնային մեր զրականութեան ա-

ԲԱԶՄԱՎԷՊ

իրեն չափ պատրաստութիւն, սէր և հա-
կում ունենալու մտաւորական կեանքին,
անհուն տենչ մը օգտուելու Եւրոպայէն և
արեւմտեան մշակոյթի բարիքներէն: Այս
ծրագրին դէմ յարուցուած արգելքները,
առաջ եկած նիւթական միջոցներու պա-
կասէն, խորտակեցին ամէն ինչ որ կար
իր մէջ գաղափարային. ի տես իր այս
ազնուական և բարձր տրամադրութիւն-
ներու քայքայումին՝ ան հակեցաւ քայի
մեղամաղձոտութիւն և յոռետես առանձնա-
սիրութիւն, որուն արդէն նշանները զարո-
ցականի իր կեանքին մէջ տուած էր: Այս
շրջանը Տէմիրճիպաշեանի կեանքին մէջ
ամէնէն վտանգաւոր շրջանն է, որ տխուր
ապագային կը պատրաստէ անոր հոգին,
արդէն զիւրազգած, զիւրաւ փշրուող էու-
թիւն մը՝ զոր չկրցան ճանչնալ ո՛չ իրեն-
ները և ո՛չ ալ իր ամէնէն աւելի բարե-
կեցիկ մօտաւոր ազգականները: Իր հօրեղ-
բօրորդւոյն խոսքով ծովամայն ինքնա-
սպանութիւնը կը ցնցէ զինքը. սիրային
յուսախաբութիւն մը Գառըզիւղի աղջկէ
մը պատճառուած՝ կու տայ երկրորդ հա-
րուածը, որ կ'առաջնորդէ զինքը Մօտա
Պուռնի բարձրութիւնէն գահավիժելու ինք-
զինքը դէպի ծովուն ալիքները. այդ պա-
րագան ծանօթ է մեզի Մինաս Չերազին
գրած իր մէկ նամակէն. «Էջ մը վէրթէր
կարգալէ ետեւ՝ պիտի ուղղուիմ դէպի Մօտա
Պուռնին, այն վայրն անդիմադրելի հրա-
պոյր մ'ունեցած է միշտ հոգւոյս...: Հոնկէ
ծառի մը յեց՝ վերջին արփույս խոնարհիլը
պիտի տեսնեմ ծննդեանս լերանց ետին...:
Այս կրօնական ժամուն՝ ուր զաղղիական
եկեղեցւոյ գանգակն սկսի հնչել յամբ ու
ողբալուր, հոգեվարի աղօթքներ պիտի
մըմնջեմ, մինչեւ ալ մարդ չմնայ եզերքին
վրայ. այն ատեն պիտի յառաջանամ ի
ծով. «ծոցդ անոյշ ալ չես բանար սի-
րականիդ»: Կոհակները վտիտ մարմնոյս
հետ պիտի խաղան, ինչպէս ես իրենց
հետ այնքան կ'սիրէի խաղալ մանկու-
թեանս ատեն, Պայրէնի նման, խարտեաշ

մագերու վրայ աղու նշոյլ պիտի սփռէ
Ֆէնէրի խորհրդափայլ լապտերը...: Ծնըն-
դեանս տօնն է այսօր...: Ծնած օրը մեռաւ
պիտի բան... Ահ, կեանքին վրէժը պիտի
լուծէ մահս. — ինչ գեղեցիկ պիտի ըլ-
լայ, Մինաս...: Եթէ մարմինս ծովէն
հանեն ու սեւ հողը դնեն, յոյն աղջկան
տաղանթովը գրէ շիրմիս վրայ — եթէ
ունենամ — Մի՛ ծանրանար վրան հոգ,
այնքան թեթեւ էր նա վրադ¹:

Տրամադրութիւններ ահա հիւանդ տղու,
որ 1874-ին արդէն իր ապագայ ողբեր-
գութիւնը կը գրէ, տարօրինակ կերպով
տարբարախտ՝ հալածուած իր խել սրտէն,
որ կը փնտռէ սիրող սիրտ և գուրգուրանք.
իր այս անդրանիկ սիրահարական պա-
տանքը անջնջելի մնաց իր երեւակայու-
թեան մէջ, զոր տասը տարի վերջն ալ կը
յիշէր, գրելով իր գրական և իմաստասիրա-
կան Շարժումի մէջ. «Կը ախրիմ զի բեզ
կը խորհիմ, ո՛ր Մարիամ (որ պատասխանն
է ներքին ձայնի մը՝ հասած իր ականջին —
ինչ կը խորհիս, Եղիա)»: «Կը խորհիմ
թէ... եթէ միայն ինձ նուիրէիր քու սիրտդ
ահ, նոր Էլօրդ և Ապելառ մենք պիտի
ըլլայինք: Կը խորհիմ որ եթէ կամէիր
սպրիլ զիս սիրելու, զիս պահպանելու,
զիս մեծացունելու համար, սիրտս աւելի
լուսաւոր անշուշտ պիտի ըլլար, ու միտքս
աւելի բեղմնաւոր, ու կեանքս աւելի փա-
ռաւոր»: Ինչ երազներ արգարեւ երիտա-
սարդ Եղիային, որ իր տաղանդին ամէնէն
առոյգ, ամէնէն բեղուն տարիները կ'ա-
պրէր՝ անօգնական, անմխիթար, յաճախ
մատնուած իր մաղձոտութեան և յուսա-
հատական նոպաներուն: Կեանքի այսպիսի
լուծում մը, ընտանեկան յարկի մը ստեղ-
ծումով՝ ուր մանուկներ ճռուողէին իր
անհուն տրտմութիւններուն ամպերը ցրուե-
լու՝ մնաց միշտ մտացածին խորհուրդ,

(1) Ֆէնէրճեան — Պետրոսեան «Եղիա Տէմիրճիպա-
շեան». Կ. Պոլիս 1921, էջ 18-19:

երեւակայական մղձաւանջ. Եղիա այդ
մարդը չէր, իր հոգեկան տրամադրու-
թիւնները անկայուն և յարափոփոխ, իր
մտքին որոշողութիւնները անվճռական և
անկշռադատ՝ երբեք պիտի չյանգէին գործ-
նական հետեւանքի մը: Անձնասպանու-
թեան փորձը, զոր Եղիա կատարեց, դըր-
դեց իրենները ատենուան մը համար հե-
ռացնելու զինքը Կ. Պոլսոյ միջավայրէն.
օղափոխութիւն մը անտարակոյս պիտի
նպաստէր իր բարոյական ու հոգեկան
ուժերը վերստանալու. այդ ճամբորդու-
թեան համար դրամական օգնութիւն կը
բերէ իր մօրաբոլոր տիկին Թագուհի Ներ-
սէսեան: Յանձնարարուած էր Եղիային՝
Մարսիլիոյ մէջ հետեւելու առեւտրական
գիտութեանց, յուսալով այդպէս կարե-
նալ կապել զինքը կեանքին և իրականու-
թեան: Հոս ալ ուրիշ սխալ մը՝ զոր գոր-
ծեցին իրենները, կարծես անձանթ ըլ-
լային անոր մտայնութեան և հոգեբանա-
կան վիճակին. Եղիա պէտք ունէր իմաս-
տուն առաջնորդ — դաստիարակի մը՝ որ
հսկէր իր բոլոր ուժերուն, իր բոլոր
ձկտումներուն վրայ. ատոր պակասէն՝
գրասէր երիտասարդը կը նուիրուի ան-
սանձելի մոլութեամբ մը վերստին զրքե-

րուն, ու իր մտքին շփոթին վրայ կ'ա-
ւելցնէ այս անգամ նաեւ փիլիսոփայական
ահագին ծանօթութիւն մը, դրապաշտ
զարոցին փիլիսոփայութիւնը, որ Լիդեէն
թերեւս կ'անցնէր իր մէջ: Հոն փոխանակ
առեւտրական ընթացքին հետեւելու, հրա-
պարակագրութեան կը ձեռնարկէ (երիտա-
սարդական յաւակնոտութիւն՝ որ կը բա-
ցատրուի Եղիային մէջ) Քրանսերէն թեր-
թով մը «Le Moniteur littéraire et
financier de Marseille» հայ ազգը
արեւմուտքին ճանչցնելու համար, որուն
սակայն քանի մը թիւերը միայն լոյս կը
տեսնեն:

Մարսիլիոյ չփրկեց Տէմիրճիպաշեանը
իր հոգեբուժումին մէջ. 1876-ին, երկու
տարի վերջ, վերադարձաւ Պոլիս, Վոս-
փորի գեղածիժաղ ջուրերուն անհուն կա-
րօտով և միաժամանակ հայ գրին սպա-
սահարկութեան անգուսպ ծարաւով: Ան
հիմա կը դառնար Եւրոպայէն, ուր այնքան
փափաքած էր անցնիլ, կը դառնար իր
ազգակիցներուն մօտ՝ իր մտքին տարօր-
նակութեամբ՝ ինչպէս մեկնած էր:

Հ. ՄԵՍՐՈՊ ՃԱՆԱՇԵԱՆ

(չարտեմակի)